



ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Տնտեսական և բնական

ԳԻՏԵԼԵԱՑ

ԺԲ. ՏԱՐԻ. ԹԻԻ 21.

1854

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Քիչ խօսք . Այլի մտածք . Գաղտնիքի պահե :

Ասոնք իրեք կարճ խօսքեր են , բայց մարդկային քաղաքական կենսաց մէջ ա. մենահարկաւոր ըլլալուն՝ կ'արժէ որ վրանին խօսինք :

Քիչ խօսք . Այս գեղեցիկ խօսքիս փոքրագոյնք մանաւանդ պէտք է աղէկ ուշ դնեն՝ թէ որ կ'ուզեն սիրելի ու պատուական ըլլալ : “Ա՛նձերը , կ'ըսէ իմաստունն Սիրաք , պէտք է խօսին , վասն զի այն է պատշաճն ու վայելուչը , բայց խելքով խօսին . իսկ դուք , որ տարուօք պզտիկ էք , կ'ըսէ , շատ զգուշութեամբ խօսեցէք նաեւ ձեզի ինկած խօսքերն ալ . շատ բանի մէջ չգիտցող երեցէք , լուութեամբ մտիկ ըրէք , ու

տեղեկանալու համար միայն խօսեցէք , իմաստնոյ մը հարցունքին թէ “Ա՛նչ պէս այնչափ գիտութիւն ունեցեր ես , — “Ասելով , ըսաւ իմաստունը , ու չգիտցածս հարցընելով անոնց , որ կըրնային սովըցընել ինձի , ” Այլ իրաւընէ կրտսերագունի մը՝ միտքն ու սիրտը շտկելու համար ասկէց լաւ բան չկայ . քիչ խօսել , շատ հարցընել , աւելի մտիկ ընել , ու մինակ եղած ատենը՝ խօսակցութեան մէջ ուրիշէն լսածներուն վրայ անդրադարձութիւն ընել :

Վզտիկ մը որ քիչ կը խօսի՝ աւելի յարգ ու աւելի պատիւ կը գտնէ : Թէ որ խելացի ու տաղանդաւոր է՝ իր հա.

մեստութեամբն ու զգուշաւորութեամբ
բը ալ աւելի կը փայլի իր խելքը . թէ որ
խելք ու տաղանդ չունի՝ լուութեամբը
անխելքութիւնը կը ծածկուի : Թէ ու
փրատ տեսնելով մէկը որ ընկերու-
թեան մը մէջ չէր խօսեր՝ « Թէ որ խե-
լացի ես , ըսաւ անոր , յանցանք է ը-
րածդ . իսկ թէ որ չէ , գովելի ես » :

Սուրբ Գիորգն ալ նոյնպէս կը սովորե-
ցնէ մեզի՝ թէ աւելի լաւ է նա , որ իր
տկարութիւնը չիմացընէր , քան զայն՝ որ
իր իմաստութիւնը կը ծածկէ . և թէ
պակասամիտ մէկն ալ՝ թէ որ լուել գի-
տէ , իմաստնոյ տեղ կ'անցնի :

Եկու մը երբոր ուրիշ կատարելու
թիւններ կը պակսին , լուութիւնը պէտք
է անոնց տեղը բռնէ . բայց եկուր նայէ
որ շատ հեղու անոնք են աւելի խօսիչ
սիրողները , որոնց որ պէտք էր աւելի
լուել : Տգէտ մը որ ամէն բան գիտ-
ցողի պէս բնաւ բանի մը վրայ չտարա-
կուսիր՝ ամէն բանի վրայ կը խօսի հա-
մարձակ ու ձայնը ոչ երբեք կը կտրի :
Եւ զարմանալին այն է՝ որ գրեթէ
միշտ քիչ բան գիտցողներն են , որ շատ
խօսութեամբ ուրիշի ականջը կը խցը-
նեն , նման այն ուղիներուն՝ , որ մեծ
կարկաջանքով մը կը վազեն , բայց շատ
հեղու ոտքէ մը աւելի խորութիւն չու-
նին :

Արուն որ մօտիկ ընել միայն պէտք էր՝
և կը խօսի ու շատ և պոռալով կը խօսի ,
խօսածը ինչ կ'ուզէ թող ըլլայ՝ կ'իմա-
ցնէ որ չմտածող մարդ է , կամ գոնէ
տխմար . իսկ թէ որ խօսածն ալ բան չը-
լայ՝ ոչ միայն չմտածող է և տխմար ,
այլ և յիմար : Ի՞նչ քանար ուրեմն , շա-
տերուն պէս , որ շատ խօսիս քու խելքդ
ցուցընելու համար . մանաւանդ համե-
տութեամբ մը ծածկելու նայէ : Հա-
մեստութիւնը այնպիսի մէկ պատուա-
կան ու ազնիւ քող մըն է , որ ծածկելու
վը աւելի յարգի կը ցուցընէ : Այլ որ
խելացի կ'ուզէ երևնալ՝ պէտք չէ որ
քանայ շատ խելքը ցուցընելու : Արիշ-
ներէն խելացի երևնալ ու փայլիլ ուզողը՝

անտարակոյս ունեցածէն ալ քիչ խելք
ունեցող կ'երևնայ ուրիշներուն . այն-
պիսի մէկ սնապարծութիւն մըն է , ո-
րով տաղտկալի կ'ըլլայ ամենուն , և ինքն
իրեն հաւնած մէկը շատ դժուար է որ
ուրիշի զինքը հաւնեցընէ :

Խելքն ու խօսքը ստրկի պէս խնայե-
լով գործածելու է . ուստի քիչ խօսելու
է ըսելով՝ համր ու մունչ կենալու է ը-
սել չենք ուզեր : Եւ թէ համեստու-
թեամբ և զգուշութեամբ խօսելը ի-
մաստութեան նշան է , մունչ կենալը՝
անբանութեան . խենթ մը որ ամենեւին
չխօսիր՝ աւելի չմտածեր : Խօսքի կար-
ճութիւնն ու դանդաղութիւնը շատ հե-
ղու խելքին կարճութեան ու դանդա-
ղութեանը նշան են . երբոր մէկուն
միտքը լեցուն է գաղափարներով , որ
շուտ շուտ մէկզմէկ կը յաջորդեն՝ այն-
պիսւոյն խօսուածքը կարճ ու դանդաղ
չկրնար ըլլալ : Գեղեցիկ տաղանդ մըն
է այդ , բայց և վտանգաւոր . և որչափ
աւելի խոհեմութիւն ու դատումն ունե-
նայ այնպիսին , որ շատ դժուարագիտ
բան է , այնչափ աւելի յարգելի է :

Որչափ խելք ու կատարելութիւն ու-
նենայ մէկը , երբոր ըստ տեղւոյն խօսե-
լու և ըստ տեղւոյն լուելու կատարելու-
թիւնը չունի՝ ոչ երբեք մեծ համար-
մունք մը կրնայ ունենալ : Իրաւ է որ
շատախօսը , ինչպէս նաև այն որ շատ
բան գիտցող կ'ուզէ երևնալ , առջի բե-
րանը բան մը կ'երևնան . բայց քառոր-
դէ մը ետքը այն առջի ստացած համար-
մունքնին բոլոր կը կորսնցընեն . կը սկը-
սին զարմացընելով ու կը լմնցընեն ալ
համարհուելով : Ինչ հակառակն՝ հա-
մեստ ու զգուշաւոր հանճար մը , որ ու-
րիշներէն վեր երևնալու չնայիր , իր այն
համեստութեամբ , որով զուրիշները
լուութեամբ մը կը մեծարէ՝ մէկէն սի-
րելի կ'ըլլայ անոնց . և որովհետև մեծ
հանճարը երկայն ատեն չկրնար ծած-
կուիլ , վերջապէս երբոր երևնալ կը
սկսի՝ կը զարմացընէ զամենքը . նմանե-
լով ամենեւին մէկ հարուստ հանքի մը ,
որ առջի բերանը մէկ քանի սև ու ան-
շուք ոսկւոյ կտորուանք միայն կ'երև-

ցրնէ, մինչև որ ստիպուի կերպով մը իր ծոցը պահած հարստութիւնները դուրս թափելու :

Ով որ դժուարաւ կը լռէ՝ բնաւ ի մաստուն չկրնար ըլլալ . անոր համար իմաստունները կը պատուիրէին միշտ չափով ու քիչ խօսելու . և այս առաջին դասն էր՝ զոր Պիլթագոր կու տար իր աշակերտացը . « Վամ լուռ կեցէք , կ'ըսէր , կամ թէ չէ՝ այնպիսի բան մը ըսէք , որ լուռ կենալէն աղէկ ըլլայ » : Հին Ագիպտոսն ալ , որ ամէն արուեստից , գիտութեանց և իմաստութեան խանձարուրքն եղաւ , իր մայրաքաղաքին մէջ լուռութիւն նշանակող խորհրդաւոր արձան մը ունէր , որ մատը շրթունքներուն վրայ դրած՝ իբրեւ թէ ամէն քաղաքացւոց այս լուռութեան առաքինութիւնը կը պատուիրէր :

Եւ իրաւ որ ինչ բան կայ այնպէս մեծ ու դժուարին՝ ինչպէս գիտնալ մարդուս սանձել իր լեզուն , որ ոչ երբեք չափէն աւելի համարձակի : Եւ ընդ հակառակն՝ ինչ կայ այնպէս ատելի և արհամարհ , ինչպէս շատախօս շաղակրատ մը , որուն շատխօսութիւնը այնպիսի ուղիւի մը կը նմանի , որ ոչ որ առջևը կրնայ առնուլ : Ար խօսի ու կը զրուցէ անդադար գիտցածն ալ , չգիտցածն ալ , ու բան մը չկրնար պահել . ինչ որ կը տեսնէ , ինչ որ կը լսէ , ինչ որ կը կասկածի՝ մէկէն ու ամէնն ալ կը հռչակէ , կամ թէ՛ իբրեւ գաղտուկ կ'ըսէ ամենուն ալ , որոնք կ'ուզեն իմանալ . վասն զի բոլոր աշխարհք իրեն մտերիմն են , թէ և ինքը բնաւ մէկու մը մտերիմը չըլլայ : Ատեւ ինկած կը ժողովէ ամէն օրուան մանր մունր եղած գիպուածները , տներու մէջ անցածները , մէկին մէկալին պատուոյն ու առնուանը դպչող բաները , որպէս զի տնէ տուն , ժողովքէ ժողովք հռչակէ , քաղաքին փողն ըլլալով , բայց գայթակղական փողը . որուն համար իմաստուն ժողովողն ալ կ'ըսէ թէ « Շատախօսը ահռելի է իր քաղաքացւոցը . և ով որ իր խօսակցութեանը մէջ անդպոյշ է՝ ատելի կ'ըլլայ » :

Եւ իսկ մը ատենօք շատախօսին մէկը իր կառքն առաւ մինչև իր գացած տեղը հետը տանելու . ասիկայ իր անհատնում շատխօսութեամբը ճամբան իշխանին քունը բերաւ . և երբ տեսաւ որ կը քնանայ՝ թւէն քաշել սկսաւ որ մտիկ ընէ . վասն զի շատախօսներուն մէկ ախտն ալ այս է՝ կ'ուզեն որ խօսածնին մտիկ ըլլուի : « Եւ , պարոն , ըսաւ իշխանը արթննալով , կամ թող զիս որ քնանամ , կամ քունս մի բերեր » :

Ով որ բաւական հանձար չունի աղէկ խօսելու և ոչ բաւական դատումն լուռ կենալու՝ խղճալի է իրաւ , բայց իր մէ աւելի խղճալի են անոնք , որ պէտք է իրեն մտիկ ընեն : Եւ որ համար ամէն մարդ շատախօս շաղակրատէ մը կը փախչի , հեռուէն տեսած ատենը ճամբան կը փոխէ , որչափ կրնայ՝ շուտով ձեռքէն ազատիլ կը նայի , և իբրեւ ծանր բեռէ մը ազատած՝ այնպէս ախորժ մը , թեթեւութիւն մը կ'իմանայ :

Ով որ կ'ուզես որ ընկերութիւնդ ուրիշի ախորժելի ու ցանկալի ըլլայ , այն տեսակ երկայնաբան շատախօսներէն մի ըլլար , որ անդադար կը խօսին , հազարումէկ աւելորդ պարագաներով պատմութիւններն կ'երկնցընեն , ու բռնաւ բան մը չեն մոռնար այնպէս՝ ինչպէս խօսքերնին լմնցընելը : Եւ այն որ միշտ պատմածդ նոր բան ըլլայ , ու խօսքդ տաք ձգես . մանր մունր պարագաները թող տուր , խօսքդ կարճ ըրէ և թող տուր որ քիչ մըն ալ ուրիշը զուարճանայ խօսելով . նայէ մանաւանդ որ մէկ բանը հազար հեղու կրկնելով՝ քեզի մարդավարութեամբ մտիկ ընողներուն հոգին չհանես : Եւ մէն շատախօս բան պատմողները , կ'ըսէ մատենագիր մը , կրկնող կ'ըլլան . այս իրենց արուեստին մեծ ախտն է : Եւ այնպիսի մէկ շատախօս պատմութիւններ պատմողի մը երբոր սոյն պակտութիւնը կը յանդիմանէին՝ անխուղ կերպով մը պատասխան տուաւ ըսելով . « Պէտք է թող տաք ինձի որ երբեմն երբեմն քաղուածք ընեմ իմ պատմութիւններս , որպէս զի չմոռնամ » :

Հատախօսներուն շատը աւելի յիշողութիւննին կը բանեցընեն՝ քան թէ դատմունքնին . շատ խօսող մարդ մը հասարակօրէն շատ փճախօս ալ կ'ըլլայ , այն ծառերուն կը նմանի՝ որոնց տերեւը շատ ըլլալուն ամենեւին պտուղ չունին : Յանկարծ աղէկ բան մ'ալ ըսելու որ ըլլայ՝ այնչափ գէշերուն հետ խառնուելով կ'աւրուի : Հատ խօսիլ ուզելով՝ շատ հեզու անանկ խենթ ու խելառ խօսքեր ալ կը փախցնէ բերնէն , որոնց համար ետքը կը զղջայ : Եզուն չընեն թեթեւամտութենէ միայն առաջ կու գայ : Երբոր մէկը՝ չէ անխոհեմութեամբ կամ բան ծախելու համար , հապա լաւ մտածելով ու անդրադարձութեամբ ու զենայ խօսիլ ու աղէկ բաներ խօսիլ՝ քիչ կը խօսի . բացբերան շատախօսը առանց կղպանքի սնտուկի մը կը նմանի , որուն մէջ յայտնի է թէ ստակ չկայ :

Ինոնք ևս , որ աղէկ կը խօսին , պէտք է որ շատ խօսելէն զգուշանան , թէ որ չեն ուզեր ձանձրալի ըլլալ . շատ շարժող ու վազուկ լեզու մը կը յոգնեցընէ լսողները և վերջապէս կը ձանձրացընէ : Ուրիշ կողմանէ ալ խօսքը տաքնալով , խօսողին սրտին խորը երեւան կ'ելլէ՝ առանց իրեն իմանալուն : Ինոր համար է որ խոհեմ մարդիկ աւելի լսող կ'ըլլան՝ քան թէ խօսող . վասն զի գրեթէ անկարելի է շատ խօսիլ ու միշտ աղէկ խօսիլ : Վսենոկրատ իմաստասէրը բազմաթիւ ընկերութեան մը մէջ գտնուելով՝ հարցուցին իրեն թէ ինչո՞ւ համար ինքը միայն լուռ կեցեր բան մը չէր խօսեր . պատասխանեց հանճարեղ իմաստասէրը . « Եւսն զի , ըսաւ , խօսելուս համար երբեմն զղջացեր եմ , իսկ լուռս համար ոչ երբեք » : Հատ սակաւագիւտ կատարելութիւն մըն է , ու երկնատուր մեծ պարգև մը՝ լուռ գիտնալը , որուն համար ըսաւ հեթանոս իմաստուն մը թէ « Երբ խօսել սովորեցնողները մարդիկ են , իսկ լուռ սովորեցնողները աստուածներն են » : Ինչ վարժապետն որ կրկին վարձք կ'ուզէր շատախօս շաղակրատէ մը զինքը կը թելու համար , որովհետեւ ոչ խօսիլ

միայն , այլ և լուռ ալ պիտի սովորեցընէր , թերեւս քիչ էր ուզածը . վասն զի լեզուի թեթեւութիւնը գրեթէ անբժշկելի ախտ մըն է : « Տեսա՞ր մէկը , կ'ըսէ Սուրբ Իիշքը , պատրաստ միշտ խօսելու , անկէ ուղղութիւն մի սպասեր , հապա խենթութիւն » :

Հատախօսը բան պահել չգիտեր , իսկ զգուշաւորը պէտք եղածը միայն կը զրուցէ . խօսելու զգուշութիւնը խոհեմութեան մեծ նշան մըն է և աղէկ դատմունք մը ունենալու : « Ինձոն սիրտը բերնին մէջն է , կ'ըսէ Իմաստունը , իսկ իմաստնոյն բերանը սրտին մէջ » : Սարդուն մէկը խիստ տմարդի կերպով մը ծաղրեց զՎասսոյ , որուն այն մեծ ու անուանի բանաստեղծը բնաւ պատասխան մը չտուաւ . հոն գտնուողներէն մէկը լսուելու չափ ձայնով մը ըսաւ . « Խենթ պէտք էր ըլլալ մէկը , որ ասանկ տեղ խօսք մը չզրուցէ » . — « Երբ խաբուիս , ըսաւ անոր Վասսոյ , խենթ մը լուռ չկրնար » :

Երբ անոնք , խորհրդականներու և տերութեան գործքերու ու կառավարութեան մէջ գտնուող ամենայն մեծ մարդկանց յարգն ու յարգութիւնը այս զգուշաւորութեան վրայ կեցած է : Եւսն կանանց մէջ անոնք աւելի յարգելի են ու պատկառելի , որոնք խելքով և զգուշութեամբ կը խօսին : Արոնք որ շատ խօսիլ կը սիրեն՝ իրենց խելքը կամ իրենց գիտցածը ցուցնելու մտքով , սովորաբար մեծապէս կը խաբուին , և նոյն իսկ իրենք զիրենք ցուցնել ուզելով՝ կը կորսնցընեն իրենց յարգը ամենուն առջին :

Ով որ իր լեզուն սանձել գիտէ ու կառավարել՝ շատ բան գիտէ . ամենէն պիտանի ու օգտակար գիտութիւնն այս է : Որչափ չարիք ու թշուառութիւններ կը պակսէին աշխարհքէս , թէ որ կարելի ըլլար ամէն անխոհեմ լեզուները լռեցընել . որչափ կը թեթեւցընէր մարդ թէ իր և թէ ուրիշներուն նեղութիւնն ու վիշտը , թէ որ խօսելու ատենը պահէր միշտ խոհեմութեան սովորեցած կանոնները : Ինչ որ դուն քու

Հանգիստդ կ'ուզես՝ խօսակցութեանդ մէջ շատ զգուշաւոր եղիր . թէ որ աշխարհքիս մէջ ամենուն հետ խաղաղութեամբ ապրիլ կ'ուզես՝ նայէ որ լեզուիդ իշխես : « Իր լեզուն բռնողը , կ'ըսէ Սողոմոն իմաստուն , իր հոգին կը փրկէ . իսկ ով որ խօսակցութեան մէջ անզգոյշ է՝ շատ փորձանքներու կը հանդիպի » : Դոմետիանոս կոսյորը , ինչպէս գիտեն ամենքը , շատ հեղու իր խուցին մէջ ճանճ որսալով կը զուարճանար . իրաւ որ այնպիսի ինքնակալի մը արժանաւոր զբաղմունք : Հպատակներէն մէկը , որ կ'ուզէր խօսիլ հետը՝ հարցուց Սիբիոս Արիսպոսի թէ « Կայսեր քովը մարդ կայ մի » . — « Ղանձ մըն ալ չկայ » . Ըսաւ Արիսպոս : Բայ կատակաբանութիւնը շատ ծանր նստեցաւ իրեն . վասն զի գնաց հասաւ մինչև Դոմետիանոսի ականջը , որ մեռցընել տուաւ զինքը :

Արտի խաղաղութիւնն և հոգւոյ անմեղութիւնը քիչ խօսողին երջանիկ բաժինն է . թագաւորաց իմաստնագոյնը կը սովորեցընէ մեզի՝ թէ շատ խօսողները մեղքէ ազատ չեն կրնար ըլլալ : Զէ թէ բացարձակապէս ամէն երկայն խօսակցութիւնները կը դատապարտէ , վասն զի անոնց հարկաւորն և օգտակարն ալ կայ , հապա իմացընել կ'ուզէ թէ ինչպէս մեղքը դիւրաւ մը մեր խօսակցութեանցը մէջ կը մտնէ : Ըստ դժուար է որ երկայն խօսակցութեանց մէջ առաքինութեան կամ եղբայրսիրութեան դէմ մէկ քանի բառեր ալ չխառնուին : « Ով որ իր փրկութեանն ու իմաստութեան սիրող է , կ'ըսէ մէկ բարի մարդ մը , լուութեան սիրող կ'ըլլայ » :

(ԳԻՏԻ ԸՍՏՐՈՒՆԱԳՈՒԻ)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱԳՐՈՒԹԻՒՆ

Սուրբ Հեղինէ կողի :

Բոլանտեան ովկիանոսին մէջտեղը և ցամաքէն 500 փարսախ հեռու , լուսիտանացի մոլորած նաւորդներ ժ. Զ դարուն առաջին տարւոյն գարնան՝ Ս . Հեղինէ դշտոյին տօնին օրը անբեր ժայռ մը գտան հարաւային լայնութեան 16⁰ին և արեւմտեան երկայնութեան 10⁰ին տակ , ուր որ մարդ ինչուան նոյն ատենը ոտք չէր կոխած : Բայնչափ էր այդ տխուր ժայռին ամայութիւնը , որ յայտնի կ'երևար թէ ոչ երբէք շնչաւոր արարած մը հոն երևցած ըլլայ՝ անոր ովկիանոսին անդունդներէն դուրս ցցուելէն կամ թէ աշխարհքիս ստեղծագործութենէն 'ի վեր : Բայդ քաջասիրտ նաւորդները , որ առաջին անգամ իրենք կոխեցին այն ժայռերը , ոչ բուսոյ կանաչութիւն և ոչ կենդանւոյ հետք գտան հոնտեղը . սակայն այսու ամենայնիւ նոյն տեղը հաւտատուեցան , և հետեւեալ տարուին սկսեալ՝ այծ , սագ , փասիան և զանազան տեսակ թռչուններ ու հաւեր և միանգամայն պտղատու ծառեր բերին : Բայց լուսիտանացիք յետ այսչափ ալ շէնցընելուն այդ կղզին , վերջի աստիճանի ամայութենէն ու անբերութէն ձանձրանալով՝ ձգեցին ու ետ քաշուեցան , և իրենց յաջորդեցին Հոլանտացիք 1600 թուականին . սակայն այս ետքիններս ալ քիչ մը ատեն իրենց իշխանութեանը տակ պահէլէն ետեւ թողուցին : Բայ մենէն վերջը 1651 թուականին Բնգալիա տիրապետեց , և անկէ մինչև հիմա միշտ իրեն պահէց : Բայ կղզին Բնգալիոյ շատ օգտակար եղաւ , ու գրեթէ անհրաժեշտ կարեւորութիւն մը ունեցաւ անոր իր հնգկաստան ունեցած մեծատարած աշխարհակալութեանը պատճառաւ . որովհետեւ հոն երթեկէկ ընող նաւերուն մի միայն դադար եղաւ :